ԱՐՄԷՆ ՍՐԿ. ԱԹԱՋԱՆԵԱՆ
(Տ. Էմմանուէլ Արքեպս, 25 Յունիս 1995)

Ես՝ Արմէն Գարէնի Աթաջանեան, ծնուել եմ 1967թ. Դեկտեմբերի 14ին Երեւանում: Հայրս՝ Գարէն Աթաջանեան, մասնագիտութեամբ ճարտարագէտ: Մայրս՝ Լուսինէ Աթաջանեան, մասնագիտութեամբ մաթեմատիկայի ուսուցիչ:

Վեց տարեկանից յանախել եմ միջնակարգ դպրոց, 10 տարի յետոյ 1986թ. մեկնել եմ բանակ եւ ծառայել իբրեւ կրտսեր հրամանատար: 1988թ. վերադարձել եմ Հայրենիք եւ ուսումս շարունակելով ստացել եմ բարձրագոյն կրթութիւն աւարտելով վերոյիշեալ ԲՈՒՀ-ի Մեքենաշինական բաժինը: Զուգընթաց ուսանել եմ նաեւ «Ռազմական Գործ», ստանալով սպայի աստիճան: Բանակից յետոյ, երկու տարիներ շարունակ, մասնակցել եմ Կրօնի Ուսուցիչների պատրաստման դասընթացքների (կազմակերպուած Արարատեան թեմում, Երեւանի Ս. Սարգիս եկեղեցուն կից) եւ ստացել դասաւանդման իրաւունք: Այդ ընթացքում, ռեկտոր՝ պրոֆ. Սարգսեանի թոյլտուութեամբ, կազմակերպել էի Հայ Եկեղեցու Պատմութեան դասընթացքներ մեր Համալսարանում՝ Ս. Էջմիածնից վարդապետ հրաւիրելով:

Դպրոցական եւ համալսարանական տարիներին զբաղուել եմ սպորտով եւ երաժշտութեամբ:

1992ից սովորել եմ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքի Ընծայարանում եւ 1995թ. աւարտել: 1992ի Դեկտեմբերի 5ին Ս. Յակոբ Մայր Տաճարում, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի, ձեռնադրուել եմ սարկաւագ:

Ունեմ կրտսեր եղբայր մասնագիտութեամբ ճարտարագէտ:

ԳԷՈՐԳ ՍՐԿ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ
(Տ. Ընծանուէր Արքեպս, 25 Յունիս 1995)

Ես Գէորգ Ալեքսոյի Բաբախանեան, ծնուել եմ 1968թ. Յունիս 21ին, Հայաստանի Հանրապետութեան Էջմիածնի շրջանի Գայ գիւղում: Հայրս «ինքնեներ» է, մայրս՝ ուսուցչուհի: Ունեմ երկու եղբայր: 1975թ. ընդունուել եմ գիւղի միջնակարգ դպրոցը: 1985թ. աւարտել եմ այն ոսկէ մետալով: Նոյն տարուայ Սեպտեմբերին ընդունուել եմ Երեւանի Խ. Աբովեանի անուան մանկավարժական ինստիտուտի մշակոյթի բաժինը:

1986-88 թուականներին ծառայել եմ Սովետական միութեան զինուած ուժերում: Զօրացրուելով, շարունակել եմ ուսումս եւ ինստիտուտն աւարտել 1991 թուականին, կինոբեմադրիչ մասնագիտութեամբ:

Ուսումնառութեանս շրջանին աշխատել եմ Երեւանի «Նօրք» թատրոնում, որպէս դերասան:

1991 թուականից «Հայ Միասնութեան Խաչ» (ՀՄԽ) բարեգործական կազմակերպութեան փոխնախագահն եմ, միաժամանակ ՀԵԽին կից ընտանիք-մանկատան տնօրէնը:

1992 թուականին ընդունուել եմ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը: Այն աւարտել եմ 1995թ. Մայիսին: 1993թ. Օգոստոսի 14ին, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի, ձեռնադրուել եմ սարկաւագ:

digitised by A.R.A.R.@

ՆՈՐԱՅՐ ՍՐԿ. ԶԱՖԱՐԵԱՆ
(Տ. Թէոդորոս Աբեղայ, 25 Յունիս 1995)

Ես՝ Նորայր Վազգէնի Զաֆարեանս ծնուել եմ 1969ի Դեկտեմբեր 14ին, Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաք Երեւանում: Հայրս Վազգէն Զաֆարեանը աւտոհաւաքող է, մայրս Ասյա Հայրապետեանը ջուլիակուհի է, այժմ կոչուած է հանգստի: 1976-1987թթ. սովորել եմ Երեւանի թիւ 11 միջնակարգ դպրոցում: Միջնակարգ կրթութիւն ստանալուց յետոյ ընդունուել եմ Երեւանի Ճարտարագիտական Համալսարանի «Ռադիոտեխնիկայ»-ի բաժինը: Նոյն տարուայ դեկտեմբեր ամսին զօրակոչուել եմ զինուորական ծառայութեան, ծառայութեան ընթացքում ստացել եմ սերժանտի կոչում, 1989ին զօրացրուել եմ: 1990ի Յունուարից շարունակել եմ ուսումս եւ համընթաց աշխատել եմ Երեւանի «Հայաւիոհամալիր» գործարանում, որպէս ռադիոսարքերի փականագործ-հաւաքող: Որպէս դպիր ծառայել եմ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում, ապա էջմիածնի Ս. Գայանէ վանքում: 1992ին ընդունուել եմ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարան եւ Ընծայարան: 1993ի Օգոստոսի 14ին, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռնադրուեցի սարկաւագ: 1995ի Մայիսին աւարտել եմ Ընծայարանի Դ. տարին: Ունեմ երկու եղբայր եւ քոյր: Մեծ եղբայրս ճարտարապետ-շինարար է, ամուսնացած է ունի երեք զաւակ, փոքր եղբայրս երեւանի Ճարտարագիտական Համալսարանի ուսանող, քոյրս տնտեսագէտ է, ամուսնացած է ունի երեք զաւակ:

digitised by A.R.A.R.@